զին հեռացան 'ի Կամենիցէ, այլ Հայոց չեն թողուլ ելնելու, որով և նոցա մայրապետք կը մնան 'ի քաղաքին։ Երկու ամիս հոն մնալէն վերջը, առանց հալածանք կրելու 'ի յաղթականաց, հրաման կ'ելնէ՝ որ հեռանան քաղաքէն. քսութիւնք եղած են պատճառը... 'ի թիւս Հայոց կային 14 մայրապետ կուսանք։ Սոքա ամսօրեայ մի ճանապարհորդելով կը հասնին յափն ծովուն, և կը մտնեն երեք նաւերու մէջ, յորոց մին 'ի ճանապարհին կ'ընկղմի, և այլ երկուքն կը հասնին 'ի Սիզոպոլ քաղաք Տաճկաց։ Անճար պանդուխտներն անմարդի կը գտնեն քաղաքը, զի նախընթաց տարւոյն ժանտախտը ջարդել էր անոր բնիկիչքը, և ողջ մնացողները թողել գնացել էին քաղաքը. սակայն Սուլդանին հրամանն այն էր՝ որ Հայք ներքին գաւառները չգաղթին։ Հոն կ'անցընեն բովանդակ ձմեռը, գարնան (1673) կ'անցնին 'ի Մակեդոնիա գաւառն, ուր և ազատ չունչ կ'առնուն։ Կը շինեն իրենց համար եկեղեցի, ուր կը զետեղեն հետերնին բերած Հրաշագործ պատկերը։ Այլ սէր Լեհաստան (երկրորդ) հայրենեաց կը մաշէ նոցա սիրտը։ 1675ին կ'որոշեն մայրապետք լռելեայն՝ դառնալ վերստին 'ի Լեհաստան։ Ցաջողութեամբ կը հասնին 'ի Պուքարեշտ, ուր Ուլախաց իշխանուհին իրեն մօտ կը պահէ զնոսա տասն ամիս։ 1676ին կը հասնին 'ի Սդանեսլաւով քաղաք։ Իլվովի Թորոսեփիշ արքեպիսկոպոսին խնդրանաք, կ'անցնին մայրապետք 'ի Սթանեսլաւովէ յԻլվով, ուր Հայոց գերեզմանատան անշուք վանքին մէջ կը պատըսպարին։ Այն միջոցին Կամենիցէն ելնող մայրապետաց թիւը երեքի հասած էր. զի նոցանէ երեքն Հայոց լեզուն չգիտնալնուն պատճառաւ՝